ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի սեպտեմբերի 10-ից 12-ը Վրաստան (ք. Թբիլիսի) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Աշոտ Մուրադյան

Ներսես Զեյնալյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Վրաստան, ք.Թբիլիսի, 2023 թվականի սեպտեմբերի 10-ից 12-ը

4. Հրավիրող կողմը՝

Վրաստանի և Ալժիրի հարկային մարմինները՝ որպես «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության հարկային վարչարարության համագործակցության մեխանիզմի (BRITACOM) ընթացիկ համանախագահողներ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման հիմնական նպատակը «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության հարկային վարչարարության համագործակցության 4-րդ համաժողովին (The Belt and Road Initiative Tax Administration Cooperation Forum - BRITACOF) (այսուհետ՝ Համաժողովին) Հայաստանի Հանրապետության ներկայացվածության ապահովումն է: Հարկային մարմինների համագործակցության ամենամյա համաժողովը՝ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության հարկային վարչարարության համագործակցության մեխանիզմի (BRITACOM) գլխավոր միջոցառումն է, որին մասնակցում են BRITACOM-ի մասնակից և դիտորդ երկրների բարձրաստիճան ներկայացուցիչները և որի ընթացքում քննարկվում են տարածաշրջանի երկրների առջև ծառացող մարտահրավերներն ու

միտումները, փոխանակվում է խնդիրների լուծման լավագույն միջազգային փորձը: ՀՀ ՊԵԿ-ը՝ որպես դիտորդ, մասնակցում է BRITACOM-ին վերջինիս հիմնադրման պահից:

2023թ. համաժողովում տեղի է ունեցել ծանոթություն հարկային միջավայրի հիմնական թեմաների շուրջ շնորհանդեսներին և պանելային քննարկումներին, ինչպես նաև հարկային բիզնես միջավայրի օպտիմալացման ընդհանուր պլանավորման, հարկային թափանցիկության, հարկային բեռի նվազեցման, հարկային կարգապահության բեռի պարզեցման, թվային տեխնոլոգիաների կիրառման և վեճերի լուծման հարցերի քննարկումներին:

Իր հերթին համաժողովի աշխատանքներին իր ներդրումն է ունեցել նաև հայկական պատվիրակությունը՝ պանելային քննարկմանը որպես հիմնական խոսնակ հանդես գալու միջոցով:

Բացի այդ, համաժողովի շրջանակներում հնարավորություն է ստեղծվել երկկողմ ձևաչափով անդրադառնալ հարկային վարչարարության արդյունավետ իրականացման հարցերի:

6. Քննարկված թեմաները՝

- Հարկային ոլորտի գլոբալ զարգացումները և առավել հրատապ խնդիրները, այդ թվում՝ հարկային մարմիններում աշխատանքային միջավայրի օպտիմալացումը և այդ նպատակով թվային տեխնոլոգիաների կիրառումը,
- Հարկային օրենսդրության և վարչարարության թափանցիկության ապահովումը,
- Հարկային վարչարարական բեռի նվազեցումը և հարկային կարգապահության դյուրացումը,
- Բիզնեսի և հարկային մարմինների միջև վեճերի կարգավորման մեխանիզմները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաժողովի՝ հարկային կարգապահության ամրապնդմանը նվիրված պանելային քննարկման ընթացքում հիմնական զեկուցողների շարքում հանդես է եկել ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանը՝ ներկայացնելով երկրի հարկային միջավայրի բարելավման ՀՀ փորձը: Ներկայացվել է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը

հարկային կարգապահության բարելավման գործում: Քննարկումը էական արձագանք է ստացել մասնագիտական համայնքի շրջանում:

Համաժողովի աշխատանքների շրջանակներում ՀՀ պատվիրակությունը նաև երկկողմ հանդիպումներ է ունեցել մի շարք պետությունների պատվիրակությունների հետ, մասնավորապես՝ Վրաստանի, Ղազախստանի և Իրանի: Հանդիպումների ընթացքում կողմերը համառոտ ներկայացրել են իրենց երկրներում իրականացվող հարկային բարեփոխումների ծրագրերը և կարևորել միջազգային համագործակցության դերը՝ ոլորտի լավագույն փորձի հայթայթման և տարածման գործում: Երկկողմ հանդիպումների շրջանակներում Վրաստանի Հանրապետության եկամուտների ծառայության ղեկավարության հետ քննարկվել է երկու երկրների հարկային մարմինների միջև էլեկտրոնային հաշիվների մասին տեղեկությունների փոխանակման հնարավորությունը և դրա շուրջ աշխատանքների մեկնարկը, Ղազախստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալի կողմից առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերվել Հայաստանում պետական եկամուտների կոմիտեի կողմից շահումով խաղերի ոլորտում իրականացվող հսկողական մեխանիզմները, թվային գործիքները:

Համաժողովի շրջանակում կազմակերպվել է նաև «Հարկային երկխոսություն գործարարների և արտադրողների հետ» քննարկում, որի ընթացքում բազմաթիվ երկրների ձեռներեցներ ու շահագրգիռ այլ կողմեր հնարավորություն են ունեցել հարկային խնդիրների վերաբերյալ մտքեր փոխանակել, բարձրաձայնել մտահոգությունները և ներկայացնել առաջարկներ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համաժողովը չէր նախատեսում որևէ փաստաթղթի ստորագրում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

BRITACOF համաժողովը համախմբում է տարածարջանի երեք տասնյակ երկրների հարկային մարմինների պատվիրակներին, ինչպես նաև տարբեր միջազգային

կազմակերպությունների, գիտական հաստատությունների և գործարար համայնքի ներկայացուցիչներին: Այն եզակի հնարավորությունն է ընձեռում ճանոթանալու ոլորտի միջազգային միտումներին և կիրառվող լուծումներին, ինչպես նաև բարձրացնելու ՀՀ և ՀՀ հարկային վարչարարության ճանաչելիությունն ու միջազգային հեղինակությունը «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության գործունեության տարածաշրջանի փորձագետների, միջազգային կազմակերպությունների և գործարարների շրջանում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Աշոտ Մուրադյան

Ներսես Զեյնալյան

14.09.2023թ.